Ալեքսանդր Ծատուրյան

Անվերջ մաքառումն

Հո՛գ չէ. թե նորից կյանքդ չարաչար
Մեզ խաբեց, եղբա՛յր... Եվ այսօր մեր շուրջ
Նորից տիրել է սըրտամաշ խավար,
Չե՞ն շողում էլ մեզ ո՛չ հույս, ո՛չ անուրջ...

Եվ խավար հեռուն աչքներըս հառած,
Անսեղան հյուր ենք կյանքի խընջույքում.
Մեր գարունն անվա՛րդ, մեր լույսը մարա՛ծ,
Թույն է ծովացել մեր տանջված կըրծքում…

Մենք օրորոցից ուսանք մաքառել,
Կըռվի մեջ անցավ բովանդակ մեր կյանք,
Կըռվե՛նք աննահանջ, քանի չենք մեռել
Կըռվում է և՛ մահ, կըռվում և՛ փրկանք…